ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Աղվանից աշխարհի գրականության մասին.— Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր Ասատուր Մնացականյանի հետաքրքիր աշխատությունը՝ նվիրված Աղվանից աշխարհի գրականությանը:

Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է 5—13-րդ դարերի հայկական գրական հուշարձանները Արցախում, Ուտիքում և Գարդմանում: Առանձին տեղ է հատկացրել հին Հայաստանի արևելյան մարզերը Աղվանքի հետ բռնի կերպով միացնելու պատմությանը և մատնանշում է, որ չնայած այդ միացմանը հայերն այդ մարզերում կազմել են բնակչության գրեթե կեսը և հայոց լեզուն հետագայում դարձել է պետական լեզու ամբողջ Աղվանքում: Աղվանից աշխարհի բնակչությունը բաղկացած էր 26 տարբեր ցեղերից, մինչդեռ հայերը էթնիկապես միատարր էին:

Ա. Մնացականյանը մանրամասնորեն վերլուծել է գրական տարբեր հուշարձաններն ու փաստաթղթերը, ինչպես նաև պատմա-գեղարվեստական առանձին ստեղծագործությունները, որոնք պատկանել են 7-րդ դարի բանաստեղծ Դավթակ Քերթողին, Մովսես Կաղանկատվացուն, Աղվանից թագավոր և բանաստեղծ Համամ Արեւելցուն և ուրիշներին: Միաժամանակ հեղինակը աչքաթող չի արել նաև բուն Աղվանից դպրությունը:

Թլկատինցու անվամբ.— Հայաստանի Մինիստրների սովետի որոշմամբ Նոր Խարբերտ ավանի միջնակարգ դպրոցը կոչված է արևմտահայ նշանավոր գրող և մանկավարժ Թլկատինցու (Հովհաննես Հարությունյան) անվամբ, ի հավերժացումն գրողի հիշատակի:

Ռ. Պատկանյանի երկերի հրատարակությունը.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը գրեթե միաժամանակ լույս ընծայեց Ռափայել Պատկանյանի երկերի 3-րդ և 4-րդ հատորները: Հեղինակի բոլոր երկերը հրատարակվելու են ութ հատորով:

3-րդ հատորի մեջ զետեղված են հեղինակի թատերական գործերը, իսկ 4-րդ հատորը ընդգրկում է Ռ. Պատկանյանի երգիծական պատմվածքները՝ գրված Նոր Նախիջևանի բարբառով, որոնք վերցված են հեղինակի ծննդավայրի կյանքից:

Բարեկարգումներ Վահանավանքում.— Ղափանի շրջանում է գտնվում պատմական Վահանավանքը, որը կառուցվել է 10-րդ դարում Բագրատունյաց Գագիկ թագավորի որդի Վահանի կողմից: Վանքը ներկայացնում է հուշարձանների մի խումբ: Այնինքի միջնադարյան պատմության ուսումնասիրության համար հուշարձանների այս խումբը մեծ արժեք է ներկայացնում:

Պատմական հուշարձանների պահպանության հանրապետական ընկերությունը և Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտը ձեռնամուխ են եղել Վահանավանքի բարեկարգմանը և մասնակի պեղումներին: Հայտնաբերվել են ջնարակած խեցեղեն արձանագրություններ հատկապես Տաճարի մուտքի մոտ գտնվող կոթողի վրա, որոնք վկայում են, որ այդ կոթողը կառուցել է Շահանդուխտ թագուհին ի հիշատակ Գրիգոր թագավորի:

Նոր հայտնաբերումներ Արին-բերդում.— Հնագիտության ինստիտուտը այս ամառ շարունակում է պեղման աշխատանքները Արին-բերդում: Հայտնաբերվել են նոր նյութեր ուրարտական Էրիբունի քաղաք-ամրոցի վերաբերյալ: Այդ նյութերը շատ բան են ավելացնում այն ամենին, ինչ հայտնի է եղել մինչև այժմ Արին-բերդի վերաբերյալ:

Հայտնաբերված նյութերի թվումն են Արգիշտի 1-ի և նրա որդի Սադուրի սեպագիր արձանագրությունները, որոնք գրեթե անաղարտ են մնացել: Արձանագրությունները վերաբերում են Էրիբունիի պալատի կառուցման և քաղաքի տնտեսական կյանքին:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում պալատի մեծ դահլիճը, որի մակերեսը կազմում է 440 քառ. մետր, թեպետ այն դեռևս լրիվ չի մաքրված հողից: Դահլիճը եղել է պունազարդ և ամբողջովին նկարազարդված: Նկարները գրեթե չեն խունացել: Բերդի այլ մասերում ևս հայտնաբերվել են որմնանկարների պատառիկներ: Որմնանկարները իրենց բովանդակությամբ տարբերվում են մինչ այժմ հայտնաբերվածներից:

Պեղումների ժամանակ գտնվել է եգիպտական Բես աստուծո փոքրիկ քանդակը, որը եգիպտական ծագումի միակ առարկան է հայտնաբերված Արին-բերդում և անշուշտ վկայում է երկու երկրների կապերի մասին:

Պեղումներ Իջևանի շրջանում.— Գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Ս. Եսայանը այս ամսո հետաքրքիր պեղումներ է կատարել Իջևանի շրջանի Ենոքավան գյուղի մոտ գտնվող Աառղաբլուրի շրջակայքում: Հայտնաբերված է ցիկլոպյան ամրոց և գերեզմանատուն: Պեղված են 25 դամբարաններ, որոնք պատկանում են նախաքրիստոնեական շրջանին (10—15-րդ դդ.):

Դամբարաններում հայտնաբերված են նուրբ աշխատված բրոնզյա զարդեր և իրեր, հետաքրքիր ձևի և չափերի խեցեղեն անոթներ, երկաթյա դաշույններ՝ բրոնզյա բռնակներով և այլ իրեր: Ցիկլոպյան ամրոցի սենյակներից մեկում հայտնաբերված է երկհարկանի տան կավե մոդել՝ երկկողմանի տանիքով: Այս մոդելը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Հայտնաբերված առարկաները նոր լույս են սփռում Հայաստանի հնագույն պատմության հատկապես հարևան երկրների հետ ունեցած մշակութային կապերի վրա:

Հակոբ Մեղապարտի անվամբ.— Հայաստանի Մինիստրների սովետի որոշմամբ Երևանի ամենամեծ և ամենաբարեկարգ տպարանը կոչված է Հակոբ Մեղապարտի անվամբ՝ ի հավերժացումն հայ տպագրության: Ինչպես հայտնի է, Հակոբ Մեղապարտը 1512 թվականին Վենետիկում լույս ընծայեց առաջին հինգ հայերեն գրքերը:

Տպարանի շենքի առաջ դրվելու է Հակոբ Մեղապարտի արձանը:

Հետաքրքիր թվեր.— 1966 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, Երևանի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 663079 մարդ:

Մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներում սովորում են 141 հազար աշակերտ: Երևանում գործում են 11 բարձրագույն ուսումնական հաստատություններ, շուրջ 39 հազար ուսանողներով: 20 միջնակարգ մասնագիտական դպրոցներում սովորում են 19364 աշակերտ:

Քաղաքի 86 գիտահետազոտական ինստիտուտներում աշխատում են 4242 գիտնականներ, որոնցից 108-ը գիտության դոկտորներ են և 917-ը՝ գիտության թեկնածուներ:

Երևանի փողոցները.— Հայաստանի մայրաքաղաքը ներկայիս ունի ավելի քան 900 փողոց և պողոտա: Դրանց ընդհանուր երկարությունը հասնում է շուրջ 100 կիլոմետրի: Դա տասն անգամ ավելի է, քան 40 տարի առաջ: 1926 թվականին Երևանի փողոցների ընդհանուր երկարությունը հավասար էր մոտ հարյուր կիլոմետրի:

Երկրաբանական նոր հաստատություն.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտին կից ստեղծված է նավթի և գազի երկրաբանության առանձին բաժին: Այդ բաժինը ստեղծված է հատկապես այն նպատակով, որպեսզի ավելի գործոն և արդյունավետ դառնա նավթի և գազի երկրաբանական որոնումները և պատրաստվեն որակյալ մասնագետներ այդ աշխատանքների համար:

«Արմենիա» հյուրանոցի նոր հատվածը.— Ավարտվում են «Արմենիա» հյուրանոցի նոր հատվածի շինարարական աշխատանքները: Այս հատվածը հյուրանոցի ընդհանուր շենքի երրորդ մասն է նույնպես յոթ հարկանի և նայում է դեպի Ծաղումյան փողոցը: Այն ունի 65 հարմարավետ սենյակներ՝ տաք և պաղ օդամուղներով: Շենքի 7-րդ հարկում կա բացօթյա սրճարան: Հյուրանոցի ամբողջ կահույքը պատրաստված է Երևանում:

Եկող տարվա սկզբից կսկսվի հյուրանոցի 4-րդ հատվածի կառուցումը, որն ամենամեծ հատվածն է լինելու:

Նոր գործարաններ.— Հայաստանում կառուցվում են պահածոների մի քանի նոր գործարաններ: Ծուտով կավարտվի Մասիսի (Ուլուխանլու) պտղաբանջարեղենի պահածոների խոշոր գործարանը, որը տարեկան կտա 20 միլիոն տուփ արտադրանք:

Պահածոների գործարան է կառուցվում Թալինի շրջանի Կարմրաշեն գյուղում: Այս գյուղը, որը հիմնվել է նախկին ամայի ողորում, այժմ զբաղվում է այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ, գործարանը պետք է վերամշակի ինչպես Կարմրաշենի, այնպես էլ մյուս գյուղերի գյուղատնտեսական մթերքները:

Պահածոների գործարաններ են կառուցվում Գորիսում, Արտաշատի և Նոյեմբերյանի շրջաններում:

Հրազդանի ջերմաէլեկտրակայանը.— Հայաստանում կառուցվող 4 հզոր ջերմային էլեկտրակայանների թվին է պատկանում Հրազդանի (Ախտայի) ջերմաէլեկտրակայանը, որը ապագա արդյունաբերական քաղաքի առաջնեկներից մեկն է: Այն կառուցվում է նախկին Ռնդամալ գյուղի մոտ: Թե Ռնդամալը և թե Աթարբեկյան գյուղերը մտնում են ապագա քաղաքի հողամասի մեջ:

Առաջիկա ամիսներին գործարկվելու է ջերմաէլեկտրակայանի առաջին գեներատորը 50.000 կիլովատ կարողությամբ: Մյուս գեներատորը նույն կարողությամբ կգործարկվի եկող տարի, իսկ հետագայում գործարկվելու են 2 ուրիշ գեներատորներ՝ յուրաքանչյուրը 100.000 կիլովատ կարողությամբ: Այսպիսով Հրազդանի ջերմաէլեկտրակայանը կունենա 300.000 կիլովատ կարողություն:

Միայն Երևանի և Հրազդանի ջերմաէլեկտրակայանները կտան 800.000 կիլովատ էլեկտրաէներգիա: Դա երկու անգամ ավելի է, քան Սևանի կասկադի բոլոր վեց ջրային էլեկտրակայանների կարողությունը միասին վերցրած:

Նոր ջրամբար Արթիկի շրջանում.— Մանթաշի խոշոր ջրամբարից բացի, Արթիկի շրջանում, Հոռոմ գյուղի մոտ կառուցվում է մի նոր ջրամբար: Կառուցման աշխատանքները սկսվել են այս տարվա մարտին և մեծ թափով առաջ են տարվում: Շինարարները հինգ ամսում կատարել են ավելի քան 300000 խոր. մետր հողային աշխատանքներ և գետակի առաջ փակող նողաալատները բարձրացրել են ինը մետրով:

Հոռոմի ջրամբարը ոռոգելու է 1400 հեկտար անջրդի հողեր, որոնք պատկանում են Արթիկի շրջանի կոլտնտեսություններին: Ջրամբարի մակերեսը հավասար կլինի ութ հարյուր հեկտարի և տարեկան կամբարի մոտ չորս միլիոն խոր. մետր ջուր: Նախատեսվում է ջրամբարի ափերին կառուցել հանգստյան տներ և տնկել ծառեր:

Աթաբեկ Խնկոյանի հուշարձանը—Սպիտակի շրջանի Խնկոյան գյուղում տեղի ունեցավ հայտնի առակագիր և մանկական գրող Աթաբեկ Խնկոյանի (Խնկո Ապեր) հուշարձանի հանդիսավոր բացումը: Արձանը քանդակել է արվեստի վաստակավոր գործիչ Ա. Ամարոնյանը:

Բացմանը ներկա էր հոծ բազմություն, ինչպես Խնկոյան, այնպես էլ մոտակա գյուղերից: Ա. Խնկոյանի կյանքի և գրական գործունեության մասին խոսեց գյուղի կոլտնտեսության նախագահ Հ. Հովհաննիսյանը: Ողջույնի խոսք ասացին բանաստեղծ Հ. Շիրազը, գրող Սերո Խանզադյանը և ուրիշներ: